Թեման՝
<<Մեդիագրագիտությունը՝ հայրենաճանաչողության ȷ քննադատական մտածողության ձȷավորման գործիք>>

# Նախագծային աշխատանք



Դասընթացավարներ՝
Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի թիվ1 միջն. դպրոցի ուսուցիչներ՝ Ռուզան Բեգոյան և Քնարիկ Գրիգորյան

# Թեմա՝ «Հայրենի եզերք»
## Դասարան՝ 9-րդ

Խաչքարեր



*Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,*
*Ախր ես ինչպե՞ս ուրիշտեղ մնամ*
*Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց հինձ...*

Համո Սահյան



Սուրբ Աստվածածին եկեղեցի

# Նախագծի նպատակը

- Սովորողներին ներգրավել համայնքային կյանքին, նպաստել համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
- Նպաստել սովորողների նախագծային աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանը, մեդիատիրույթում հետազոտական և համագործակցային փորձառության ձեռքբերմանը:
- Մեդիագործիքներով ձևավորել և զարգացնել հայրենաճանաչողություն և քննադատական մտածողության կարողություն: Զարգացնել տեղեկատվական, տեղեկույթի որոնման, հավաստի ու կեղծ աղբյուրները տարբերակելու հմտություններ:
- Նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, արտերկրում ապրող հասակակիցների հետ մեդիակապերի հաստատմանը:
- Նկարագրել, տեսաձայնագրել և համացանցով ներկայացնել համայնքի պատմամշակութային հարուստ ժառանգությունը:

# Վերջնարդյունքներ

- Ներկայացնի մայր հայրենիքի գողտրիկ մի եզերք Հայաստանում և արտերկրում ապրող մեր հայրենակիցներին՝ հայերեն, օտարազգի լսարանին՝ անգլերեն:
- Նկարագրի, հետազոտի, արժևորի համայնքի պատմամշակութային /հատկապես խաչքարագործության/ հարուստ ժառանգությունը,իրականացնի փաստերի վերլուծություն՝ օգտագործելով նաև մեդիագործիքներ:
- Մեկնաբանի հայրենի բնաշխարհի, հոգևոր-մշակութային ժառանգության վերաբերյալ փաստագրված,տեսագրված նյութերը և գնահատեի դրանք՝ հայրենաճանաչողության, ազգային արժեքների պահպանման և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման համատեքստում:
- Անձնական փորձառությամբ և խմբային աշխատանքով բարելավեի հաղորդակցական հմտությունները, մեդիակարողունակությունը, տարբերակի սխալ ու ոչ հավաստի տեղեկույթը:
- Ստեղծի նախագծի պրոդուկտ՝ իրազեկող տեսանյութ և բուկլետներ զբոսաշրջիկների համար:

# Նախագծի իրականացման ընթացքը

- Նախագիծը իրականացնելու նպատակով 9-րդ դասարանում ձևավորվեց թիմ: Ընտրվեց նախագծի անվանումը («Հայրենի եզերք»), սահմանվեցին նպատակ, խնդիրներ և վերջնարդյունքներ:Հստակեցվեց քայլերի հերթականությունը:

Քայլ1:

- Կատարվեց թեմատիկ բաժանում, կազմվեց ժամանակացույց (4շաբաթ):
- Ծավալվեց վերլուծական-հետազոտական ակտիվ աշխատանք. այն է՝ պատմական հավաստի փաստերի հավաքագրում, պահպանված ավանդազրույցների նոթագրում, գյուղի հոգևոր կյանքի աշխուժացման, զբոսաշրջության զարգացման , հայրենիքի հոգսով ապրող մարդկանց և հայրենիքի համար անմահացած հերոսների մասին վավերագրության կազմում և տեսանկարահանում

Քայլ 2:

Նախագծի իրականացման համար ձևավորված թիմը սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար  աշխատել է 2 խմբով՝ թեմատիկ հետևյալ բաժանումով՝

- 1-ին խումբ- Նորատուսի խաչքարեր, Սուրբ Աստվածածին եկեղեցի:
- 2-րդ խումբ- Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Աղի լճի վանք:

- Յուրաքանչյուր խումբ հետազոտել է իր թեմային առնչվող հնագիտական, պատմական աղբյուրներ, համադրել և վերլուծել է փաստերն ու գրի առած ավանդապատումները՝ համագործակցելով մյուս խմբի հետ, կիսվելով օգտակար տեղեկություններով և համացանցային հղումներով:

- Ուսումնասիրել են հայ մշակույթի և ինքնության ամենաբնութագրական արվեստի՝ խաչքարագործության պատմությունը, զրուցել են խաչքարագործ վարպետների հետ, դիտարկել նրանց աշխատանքները:

# Ընթացքը

Քայլ 3:

- Լուսանկարել և տեսանկարահանել են գյուղի տարածքի պատմամշակութային հուշարձանները, վավերացրել գյուղի հոգևոր կյանքին, խոհանոցին /զբոսաշրջիկների հետ շփումներից պարզվեց, որ նրանց շատ է հետաքրքրում հայկական խոհանոցը/ վերաբերող դրվագներ

Քայլ 4:

Պատրաստել են բուկլետներ՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Քայլ 5:

Պատրաստել են տեսանյութ՝ հայերեն և անգլերեն տեքստերով:

Տեսանյութի հղումը՝ https://youtu.be/nLlXd47ao1I?si=qHfeQBDCiLcid8An

# Աշխատանքային խմբեր









1-ին խումբ

2-րդ խումբ

## Դրվագներ աշխատանքի կատարման ընթացքից









# Տեղեկատվական բուկլետներ



## Հայրենի եզերք-Native Edge

Բարի գալուստ Նորատուս-Welcome to Noratus

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում՝ կապուտաչյա Սևանի արևմտյան ափին է գտնվում իմ հայրենի եզերքը՝ Նորատուսը:

*My native village is Noratus. It is located in Gegharkunik region, near the legendary Lake Sevan.*

Ըստ ավանդազրույցի՝ Նորատուսը մ.թ.ա. XX դարում հիմնել է Հայկ Նահապետի թոռ Գեղամը, որի անունից էլ առաջացել են Գեղարքունիք, Գեղամա լեռներ անվանումները:

*According to the tradition, Noratus was founded in the 20th century BC by Hayk Nahapet's grandson Gegham, from whose name the names Gegharkunik and Geghama mountains originated.*



## ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ
## NATIVE EDGE

Սերը Հայաստան իմ աշխարհի դու ես լցրել
ծալքերն հոգուս,
Իմ թույլ ձայնի շեշտ մայրենի, իմ պարզ երգի
ափրուն ու հույզ.
Հեռու, հեռվից քեզ եմ տեսնում, մով երկնի պես
լիճը քո լույս,
Հնամենի միշտ գեղանի, շեն հայրենի, իմ
ՆՈՐԱՏՈՒՍ...





# Բուկլետի դարձերեսները

**Նորատուսի խաչքարեր-*Noratus khachkars***

**Գյուղի բարձունքում է գտնվում Նորատուսի գերեզմանատունը, որտեղ պահպանված են *1000* հնագույն խաչքարեր:Խաչքարերի մեծ մասը թվագրված է *9-16*-րդ դարերում: Այս դամբարանադաշտը հայտնի է նաև <<Նորատուսի խաչքարերի անտառ>> անվանումով:**

***In Noratus is located the Noratus cemetery. The amount of khachkars here reaches nearly 1000 copies from the 9th to 16th centuries. Noratus cemetery is considered to be a khachkar forest.***



*Սևանը, Մեծ ու Փոքր Մասիսները խորհրդանշող խաչքարեր*



***Լուվրում ցուցադրված խաչքար***

Այս խաչքարը 2006 թվականին տարվել է Ֆրանսիա և ցուցադրվել Լուվրում: Բարեբախտաբար, այն վերադարձվել է և այժմ գտնվում է իր ծագման վայրում:





Սուրբ Մինասի մատուռ




Նորատուսի յուրահատուկ խոհանոցը-
The unique cuisine of Noratus
Ձկան խորոված-Grilled fish
Խեցգետնի կոտլետ-Crab cutlet
Խեցգետնի քյաբաբ-Crab kebab
Խաշած սիգ-Boiled whitefish
Խեցգետնի քյուֆթա-Crab meatballs
Խեցգետնի քյաբաբ-Crab kebab
Փախլավա-Pakhlava
Իշխան-Trout
Տոլմա-Tolma


Տոլմա






ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ
NATIVE EDGE
Սերը Հայաստան իմ աշխարհի դու ես լցրել ծալքերն հոգուս,
ԻՄ թույլ ձայնի շեշտ մայրենի, իմ պարզ երգի ավյուն ու հույզ,
Հեռու, հեռվից քեզ եմ տեսնում, մով երկնի պես լիճը քո լույս,
Հնամենի միշտ գեղանի, շեն հայրենի, իմ ՆՈՐԱՏՈՒՍ...
<<Հայրենի եզերք>> նախագիծը իրականացրին ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի 2022-2023 ուստարվա 9-րդ դասարանի աշակերտները:
Նախագծի ղեկավարներ՝ Հ.լեզվի և գրականության ուսուցչուհի Ռուզան Բեգոյան, Անգլերենի ուսուցչուհի Քնարիկ Գրիգորյան:
Նորատուս-2023
Թող խաղաղություն լինի ողջ աշխարհում:
Let there be peace all over the world.

# Օգտագործված գրականությունը

Խաչքարի մասին –Յոգյոր կայքէջ kachkars.am

Տեսանյութեր «Շողակաթ»,« Գեղամա», Յ1 հեռուստաալիքներից

«Նորատուս » գիրքը –Երյան. 2000թ.

Արգամ Այվազյան «Ջուղա», Երյան, 1984թ.

Սեդրակ Բարխուդարյան « Դիվան հայ վիմագրության» - Պ.4 «Գեղարքունիք»

«Հայրենի եզերք»Տեսանյութի հղումը

https://youtu.be/nLlXd47ao1I?si=qHfeQBDCiLcid8An

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:



Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ․ 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

ԳՆԱՀԱՏԵՆՔ ԵՎ ՍԻՐԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ....